15.	Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)	պարտադիր	ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում)	(չի լրացվում եւ չի կիրառվում)
16.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
17.	գործարքի նպատակը	պարտադիր	Պարտադիր լրացվում է «այսմանագրի կատարման ապահովման համար» բառերը	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
18.	Վճարման կատարման հիմքերը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի	լրացվում է շահառուի կողմից

			ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի,	
19.	Վճարման պայմանները՝	պարտադիր	պարտադիր լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը, որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար	նախապես լրացվում է շահառուի կողմից
20.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին) Եթե ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է:	լրացվում է շահառուի կողմից
21.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը:	ստորագրվում է վճարողի կողմից կամ դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը
21.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով	կնքվում է վճարողի կողմից թղթային եղանակով ներկայացնելիս
22.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	Պարտադիր՝ լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
22.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից թղթային եղանակով բանկ ներկայացնելիս
23.ա	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի)	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային	



	աշխատակցի ստորագրությունը		եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.գ	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	
24.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.գ	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N \_\_\_\_\_

ք. \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

« \_\_\_\_\_ », ի դեմս \_\_\_\_\_ -ի, որը գործում է \_\_\_\_\_ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և \_\_\_\_\_-ն, ի դեմս տնօրեն \_\_\_\_\_-ի, որը գործում է \_\_\_\_\_ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Հրազդան կիրճի հարակից Նոր Արաբկիր զբոսայգու բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի **տեխ. առաջադրանքին** ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն ---- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի

19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունած Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների դիմաց վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև վճարումները իրականացնելու նպատակով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>31</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

<sup>31</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարտաճանաչման կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:<sup>33</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագրի կնքելու միջոցով:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերեորդական տոկոսի) չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա

կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>33</sup>

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>34</sup>

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական**

<sup>33</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>34</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարել գործունեության (կոնսորցիումի)

պայմանագիր կնքելու միջոցով:<sup>35</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փասնապարհիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոստային ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառու համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>35</sup>

8.16 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

<sup>35</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:



## Ծավալաթերթ նախահաշիվ

### Տեխնիկական առաջադրանք

- Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,
- Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:
- Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:  
Շինարարական աշխատանքների ընթացքում ապահովել շինհրապարակների պատշաճ կազմակերպումը՝ կիրառելով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակների ժամանակավոր պատնեշով առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ



Հավելված թիվ 4  
20 թ. կնքված  
ծածկագրով պայմանագրի

«        »

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Բացատրագիր	
2	Ամփոփ նախահաշիվ	
3	Նախահաշիվ N1-1	Շինարարական աշխատանքներ
4	Նախահաշիվ N1-2	Նոր կառուցվող շինություն /տնտեսական/
5	Նախահաշիվ N1-3	Ոռոգում
6	Նախահաշիվ N1-4	Էլեկտրատեխնիկական մաս
7	Նախահաշիվ N1-5	Պոմպակայան
8	Ծավալաթերթ-նախահաշիվ	

## ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Նախահաշիվը կազմված է ԶԶ քաղաքաշինության նախարարության հրամանով հաստատված «գործող գներով շինարարական աշխատանքների գնահատման կարգի» համաձայն:

Նախահաշիվները կազմված են նախագծային ծավալներին համապատասխան՝ ըստ ծավալաթերթերի:

Կոնստրուկտիվ էլեմենտների նյութածախսերը վերցված են 1984 թվի նորմերով:

Հիմնական աշխատավարձը եւ մեքենաների շահագործումը գնահատված են 1984 թվի գներով եւ վերահաշվարկված 2019թ. գներով, համաձայն ռուբլուց դրամի անցման գործակիցներով /ինդեքսներով/՝

աշխատավարձի համար 1 706,12

մեքենաների շահագործման համար 2 578,27

Ռուբլուց դրամի անցման գործակիցը հաշվարկված է աշխատողների ամսական 184.687 հազ. դրամ միջին աշխատավարձի չափով:

Նյութերի արժեքները վերցված են ֆինանսների նախարարության կողմից հրատարակված 2019թ. N10 /հոկտեմբեր/ տեղեկագրից եւ 2019թ. շուկայական արժեքներից, դրանց ավելացված՝ 5% այլ նյութեր, 5.72% ճանապարհային ծախսեր, 2% պահեստային ծախսեր:

### **«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՐԱԶՂԱՆԻ ԿԻՐՃԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ԶՐՈՍԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»**

**ծրագրի ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է**

**351 884,33 հազ. դրամ, որոնց մեջ ներառված են.**

~շին. մոնտաժային աշխատանքները 340 244,62 հազ. դրամ

~տեխնիկական հսկողությունը 4423,180 հազ. դրամ

~հեղինակային հսկողությունը 2041,468 հազ. դրամ

~վերադարձի գումարը կազմում է 391,377 հազ. դրամ

\*Ապամոնտաժված պիտանի նյութերը պահեստավորվում են եւ օգտագործվում են պատվիրատուի հայեցողությամբ

Կազմեց՝

Ա. Հովհաննիսյան

Պայմանագիր N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/142-1

Ծրագրի անվանումը «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՐԱՁԴԱՆԻ ԿԻՐՈՒՆ ՀԱՐԱԿԻՑ ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»  
ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

**Ա Մ Փ Ո Փ Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

**351 884,33** հազ. դր.

Նախահաշվի և հաշվարկի համարը	Անվանումը	Շին.-մոնտաժային աշխատանքներ (հազար դրամ)	Սասրքավորում-ներ (հազար դրամ)	Այլ ծախսեր (հազար դրամ)	Ընդամենը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	<b>Գլուխ N2 Շինարարության հիմնական օբյեկտներ</b>				
Նախ N1-1	Շինարարական աշխատանքներ	206 192,23			206 192,23
Նախ N1-2	Նոր կառուցվող շինություն /տնտեսական/	13 960,56			13 960,56
Նախ N1-3	Ոռոգում	20 802,51			20 802,51
Նախ N1-4	Էլեկտրատեխնիկական մաս	24 692,53			24 692,53
Նախ N1-5	Պոմպակայան	6 141,64	3 776,00		9 917,64
	<b>Ընդամենը</b>	<b>271 789,48</b>	<b>3 776,00</b>		<b>275 565,48</b>
	<b>Ընդամենը 2 -- 7 գլուխներով</b>	<b>271 789,48</b>	<b>3 776,00</b>		<b>275 565,48</b>
	<b>Գլուխ N8</b>				
1x0.8=0.8%	Ժամանակավոր շենքեր և կառույցներ	2 174,32			2 174,32
	<b>Ընդամենը 2 -- 8 գլուխներով</b>	<b>273 963,79</b>	<b>3 776,00</b>		<b>277 739,79</b>
	<b>Գլուխ N9 Այլ ծախսեր</b>				
0.6x0.8=0.48%	Ձմեռային թանկացումներ	1 315,03			1 315,03
	<b>Ընդամենը</b>	<b>1 315,03</b>			<b>1 315,03</b>
	Առաջացած աղբի տեղափոխում 0.15%			410,95	410,95
	<b>Ընդամենը 2 -- 9 գլուխներով</b>	<b>275 278,82</b>	<b>3 776,00</b>	<b>410,95</b>	<b>279 465,77</b>
	<b>Գլուխ N10 Տնօրենություն</b>				
1,30%	Տեխնիկական հսկողություն			3 578,62	3 578,62
0,60%	Հեղինակային հսկողություն			1 651,67	1 651,67
	<b>Ընդամենը</b>			<b>5 230,30</b>	<b>5 230,30</b>
	<b>Ընդամենը 2 -- 10 գլուխներով</b>	<b>275 278,82</b>	<b>3 776,00</b>	<b>5 641,24</b>	<b>284 696,06</b>
	Չնախատեսված ծախսեր 3%	8 258,36	113,28	169,24	8 540,88
	<b>Ընդամենը</b>	<b>283 537,18</b>	<b>3 889,28</b>	<b>5 810,48</b>	<b>293 236,95</b>
	ԱԱՀ 20%	56 707,44	777,86	1 162,10	58 647,39
	<b>Ընդամենը</b>	<b>340 244,62</b>	<b>4 667,14</b>	<b>6 972,58</b>	<b>351 884,33</b>
	Այդ թվում վերադարձի գումարը				391,377

«ՄԵԳԱՍԵՏՐ» ՍՊՈ տնօրեն՝

Կազմեց՝

Ա. Գալստյան

Ա. Հովհաննիսյան

Պայմանագիր N

ԵՔ-ԳՅԱՇՁԲ-19/133-1

Ծրագրի անվանումը

«ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ՀՐԱՋՂԱՆԻ ԿԻՐՃԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ԶՐՈՍԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

**Նախահաշիվ N1-1 Շինարարական աշխատանքներ**

**Շինարարական աշխատանքների արժեքը - 206192,33 հազ. դր.**

Ինդեքսավորումը

աշխատավարձին

1706,12

մեք. եւ սարք. շահագործմանը

2578,27

Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1,0572

NN	Քիմնակումներ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Այդ թվում՝									Ընդհանուր արժեքը	Նյութերի արժեքը	Նյութերի արժեքը x1.02x1.05x 1,0572
						Աշխատավարձը		Մեքենա-մեխ. շահագործումը		Նյութերի ծախսը եւ արժեքը 1 միավորի համար							
						Ըստ նորմերի	Գործող գներով	Ըստ նորմերի	Գործող գներով	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Արժեքը	Ընդհանուր արժեքը			
7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18						
		<b>Քանդման աշխատանքներ</b>															
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա	տն	34,80	1,01	0,59	1,01								35,03		
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	34,80	2,32			0,9	2,32						80,75		
3	E27-36	Եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	գմ	2050,0	0,75	0,44	0,75								1538,92		
4	E7-317 K=0.8	Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	գմ	100,0	3,62	1,168	1,99	0,632	1,63						362,22		
5	C310-2 տ.մ.վ 29	Առկա մետաղական նստարանների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	10	1,32	0,61	1,04	0,11	0,28						13,24		



1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
6	E46-99	Բետոնե հարթակների քանդում	մ <sup>3</sup>	25,50	14,13	3,90	6,65	2,9	7,48						360,34		
7	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով /մասնակի/, h=4սմ, 420.0քմ	մ <sup>3</sup>	16,80	3,43	0,826	1,41	0,784	2,02						57,63		
8	E46-109	Բետոնե սալերի քանդում	մ <sup>2</sup>	2300,00	0,37	0,186	0,32	0,022	0,06						860,34		
9	P13-2	Բետոնե նստարանների բազալտե երեսպատման սալերի ապամոնտաժում	մ <sup>2</sup>	95,00	2,41	1,380	2,35	0,02	0,05						228,57		
10	C310-1 տ.մ.կ 29	Լուսավորության հենասյուների ապամոնտաժում	հատ	65	5,35	2,73	4,66	0,27	0,70						348,00		
11	E46-109	Անցուղիների եբետոնե սալերի քանդում	մ <sup>2</sup>	480,00	0,37	0,186	0,32	0,022	0,06						179,55		
12	P9-26 կիր.	Մետաղական բազրիքների ապամոնտաժում	զմ	145,0	0,40	0,223	0,38	0,0085	0,02						58,35		
13	C310-1 տ.մ.կ 29 K=2	Մետաղական կրպակի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	1	10,71	5,46	9,32	0,54	1,39						10,71		
14	E46-99	Բետոնե աստիճանների քանդում	մ <sup>3</sup>	0,20	14,13	3,90	6,65	2,9	7,48						2,83		
15	E15-70 K=0.5	Կասկադային ջրավազանի բազալտե թասակների ապամոնտաժում վերատեղադրումով	մ <sup>2</sup>	65,0	9,26	5,2	8,87	0,15	0,39						601,81		
16	E46-131	Կասկադային ջրավազանի բազալտե աստիճանների ապամոնտաժում վերատեղադրումով /15*30սմ/	զմ	145,0	1,08	0,63	1,08								156,84		
17	P13-2	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով երեսպատման քանդում	մ <sup>2</sup>	500,00	2,41	1,380	2,35	0,02	0,05						1203,01		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
18	P11-94	Նույնի ց/ավազե սվաղի և հարթաշերտի քանդում	մ <sup>2</sup>	500,00	0,16	0,09	0,15	0,0018	0,00						79,10		
19	E46-109	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով հարթակների քանդում	մ <sup>2</sup>	370,00	0,37	0,186	0,32	0,022	0,06						138,40		
20	P11-94	Նույնի ց/ավազե սվաղի և հարթաշերտի քանդում	մ <sup>2</sup>	370,00	0,16	0,09	0,15	0,0018	0,00						58,53		
21	E46-131	Բազալտե աստիճանների ապամոնտաժում վերատեղադրումով /15*30սմ/	զմ	85,0	1,08	0,63	1,08								91,94		
22	E15-70 K=0.5	Ջրավազան 1-ի բազալտե թասակների ապամոնտաժում վերատեղադրումով	մ <sup>2</sup>	22,0	9,26	5,2	8,87	0,15	0,39						203,69		
23	P13-2	Ջրավազան 1-ի բազալտե սալերով երեսպատման քանդում	մ <sup>2</sup>	200,0	2,41	1,380	2,35	0,02	0,05						481,20		
24	P11-94	Նույնի ց/ավազե սվաղի և հարթաշերտի քանդում	մ <sup>2</sup>	200,0	0,16	0,09	0,15	0,0018	0,00						31,64		
25	E15-70 K=0.5	Ջրավազան 2-ի բազալտե թասակների ապամոնտաժում վերատեղադրումով	մ <sup>2</sup>	30,0	9,26	5,2	8,87	0,15	0,39						277,76		
26	P13-2	Ջրավազան 2-ի բազալտե սալերով երեսպատման քանդում	մ <sup>2</sup>	160,0	2,41	1,380	2,35	0,02	0,05						384,96		
27	P11-94	Նույնի ց/ավազե սվաղի և հարթաշերտի քանդում	մ <sup>2</sup>	160,0	0,16	0,09	0,15	0,0018	0,00						25,31		
28	P13-2	Հուշարձանի բազալտե սալերով երեսպատման վնասված քարերի քանդում	մ <sup>2</sup>	120,0	2,41	1,380	2,35	0,02	0,05						288,72		
29	E46-109	Գլխավոր մուտքի աստիճանների վնասված բազալտե սալերի քանդում	մ <sup>2</sup>	40,00	0,37	0,186	0,32	0,022	0,06						14,96		
30	E1-1587	III կարգի գրունտի մշակում մեխանիզմով ա/ինքնաթափերի վրա բարձելով	մ <sup>3</sup>	221,70	0,42	0,0065	0,01	0,1592	0,41						93,46		
31	E1-1545	III կարգի բնահողի մշակում մեխանիզմով	մ <sup>3</sup>	627,80	0,32	0,0049	0,01	0,1191	0,31						198,03		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
32	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	127,90	1,88	1,1	1,88								240,03		
33	E1-1637	Բնահողի մշակում բուկորգերով	մ <sup>3</sup>	114,80	0,39			0,1510	0,39						44,69		
34	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	մ <sup>2</sup>	2851,00	0,05			0,0175	0,05						128,64		
35	C310-13 տ.մ.կ 29	Շին. արքի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	842,9	2,93	0,4	0,61	0,9	2,32						2473,61		
		<b>Կառուցողական աշխատանքներ</b>															
		<b>Քետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</b>															
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	46,03	7,87	0,11	0,19	0,76	1,96	ջուր	մ <sup>3</sup>	0,07	0,15	0,0105	362,02	5,05	5,72
										խիճ	մ <sup>3</sup>	1,26	4	5,04			
2	E27-78	Քետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	2630,0	5,36	0,401	0,68	0,0071	0,02	բետ. եզրաքար	զմ	1	2,5	2,5	14103,25	4,12	4,66
										բետոն B15	մ <sup>3</sup>	0,059	27,15	1,60185			
										շաղախ	մ <sup>3</sup>	0,0006	23	0,0138			
		<b>Քետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</b>															
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	226,0	7,85	0,11	0,19	0,76	1,96	խիճ	մ <sup>3</sup>	1,26	4	5,04	1774,95	5,04	5,71
2	E27-19	Հարթեցնող շերտ քետոնե սալերի տակ 4սմ հաստութ. չոր ց/ա շաղախով	մ <sup>3</sup>	180,80	13,85	0,07	0,12	0,21	0,54	ավազ	մ <sup>3</sup>	1,364	1,683	2,295612	2503,51	11,65	13,19
										ցեմենտ	տ	0,255	36,667	9,350085			
3	E27-176	Սալիկապատում քետոնե սալիկներով	մ <sup>2</sup>	4520,0	4,85	0,212	0,36	0,129	0,33	քետոնե սալիկներ	մ <sup>2</sup>	1	3,667	3,667	21909,56	3,67	4,15
										ավազ	մ <sup>3</sup>	0,0005	1,683	0,000842			

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
		<b>Ջրավազանների հարողորման աշխատանքներ</b>															
1	E15-70	Կասկադային ջրավազանի բազալտե թասակների վերատեղադրում	մ <sup>2</sup>	65,0	19,45	10,4	17,74	0,3	0,77	շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828	1264,55	0,83	0,94
2	E7-734 կիր.	Կասկադային ջրավազանի բազալտե աստիճանների վերատեղադրում /15*30սմ/	զմ	145,0	1,58	0,801	1,37	0,059	0,15	շաղախ	մ <sup>3</sup>	0,0025	23	0,0575	229,65	0,06	0,07
3	E15-201	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /2սմ/	մ <sup>2</sup>	500,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	705,40	0,60	0,68
4	P11-14	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով երեսպատման տակ իզոզանի շերտի իրականացում	մ <sup>2</sup>	500,0	2,04	0,334	0,57	0,0694	0,18	իզոզան	մ <sup>2</sup>	1,12	1,017	1,13904	1019,23	1,14	1,29
5	E15-201	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /3սմ/	մ <sup>2</sup>	500,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	705,40	0,60	0,68
6	E15-10	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով երեսպատման իրականացում	մ <sup>2</sup>	500,0	20,31	7,7	13,14	0,15	0,39	բազալտե սալեր ցանց	մ <sup>2</sup> մ <sup>2</sup>	0,97 1	4,917 0,4	4,76949 0,4	10157,29	6,00	6,79
7	P5-85 P5-86	Կասկադային ջրավազանի բազալտե սալերով հարթակների տակ ց/ա հարթաշերտի իրականացում /3սմ/	մ <sup>2</sup>	370,0	1,06	0,14	0,24	0,01	0,03	շաղախ	մ <sup>3</sup>	0,0306	23	0,7038	392,76	0,70	0,80
8	E15-77	Կասկադային ջրավազանի հարթակների իրականացում բազալտե սալերով	մ <sup>2</sup>	370,0	11,98	3,37	5,75	0,034	0,09	բազալտե սալեր	մ <sup>2</sup>	1,01	4,917	4,96617	4433,02	5,43	6,14
9	E7-734 կիր.	Լյգու բազալտե աստիճանների վերատեղադրում /15*30սմ/	զմ	85,0	1,58	0,801	1,37	0,059	0,15	շաղախ	մ <sup>3</sup>	0,0025	23	0,0575	134,63	0,06	0,07
10	E15-70 կիր.	Ջրավազան 1-ի բազալտե թասակների վերատեղադրում	մ <sup>2</sup>	22,00	19,45	10,4	17,74	0,3	0,77	շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828	428,00	0,83	0,94

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
11	E15-201	Ջրավազան 1-ի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /2սմ/	մ <sup>2</sup>	200,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	282,16	0,60	0,68
12	P11-14	Ջրավազան 1-ի բազալտե սալերով երեսպատման տակ իզոգամի շերտի իրականացում	մ <sup>2</sup>	200,0	2,04	0,334	0,57	0,0694	0,18	իզոգամ	մ <sup>2</sup>	1,12	1,017	1,13904	407,69	1,14	1,29
13	E15-201	Ջրավազան 1-ի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /3սմ/	մ <sup>2</sup>	200,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	282,16	0,60	0,68
14	E15-10	Ջրավազան 1-ի բազալտե սալերով երեսպատման իրականացում	մ <sup>2</sup>	200,0	20,31	7,7	13,14	0,15	0,39	բազալտե սալեր	մ <sup>2</sup>	0,97	4,917	4,76949	4062,92	6,00	6,79
										ցանց	մ <sup>2</sup>	1	0,4	0,4			
										շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828			
15	E15-70 կիր.	Ջրավազան 2-ի բազալտե թասակների վերատեղադրում	մ <sup>2</sup>	30,0	19,45	10,4	17,74	0,3	0,77	շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828	583,64	0,83	0,94
16	E15-201	Ջրավազան 2-ի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /2սմ/	մ <sup>2</sup>	160,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	225,73	0,60	0,68
17	P11-14	Ջրավազան 2-ի բազալտե սալերով երեսպատման տակ իզոգամի շերտի իրականացում	մ <sup>2</sup>	160,0	2,04	0,334	0,57	0,0694	0,18	իզոգամ	մ <sup>2</sup>	1,12	1,017	1,13904	326,15	1,14	1,29
18	E15-201	Ջրավազան 2-ի բազալտե սալերով երեսպատման տակ ց/ա սվաղի և հարթաշերտի իրականացում /3սմ/	մ <sup>2</sup>	160,0	1,41	0,356	0,61	0,05	0,13	շաղախ	մ <sup>3</sup>	0,026	23	0,598	225,73	0,60	0,68
19	E15-10	Ջրավազան 2-ի բազալտե սալերով երեսպատման իրականացում	մ <sup>2</sup>	160,0	20,31	7,7	13,14	0,15	0,39	բազալտե սալեր	մ <sup>2</sup>	0,97	4,917	4,76949	3250,33	6,00	6,79
										ցանց	մ <sup>2</sup>	1	0,4	0,4			
										շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828			
20	E15-10 K=1,5	Հուշարձանի բազալտե սալերով երեսպատման բացակայող քարերի լրացում	մ <sup>2</sup>	160,0	27,08	11,55	19,71	0,225	0,58	բազալտե սալեր	մ <sup>2</sup>	0,97	4,917	4,76949	4332,24	6,00	6,79
										ցանց	մ <sup>2</sup>	1	0,4	0,4			
										շաղախ	մ <sup>3</sup>	0,036	23,0	0,828			

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
21	E15-77	Գլխավոր մուտքի աստիճանների բազալտե սալերով երեսպատման բացակայող բարերի լրացում	մ <sup>2</sup>	60,00	11,98	3,37	5,75	0,034	0,09	բազալտե սալեր	մ <sup>2</sup>	1,01	4,917	4,96617	718,87	5,43	6,14	
										շաղախ	մ <sup>3</sup>	0,02	23	0,46				
22	E15-70 կիր.	Բացակայող բազալտե թասակների լրացում	մ <sup>2</sup>	12,00	30,05	10,4	17,74	0,3	0,77	բազալտե թասակ	մ <sup>2</sup>	1	9,250	9,25	360,60	10,19	11,53	
										շաղախ	մ <sup>3</sup>	0,036	26,0	0,936				
23	E7-734	Բացակայող բազալտե աստիճանների լրացում /15*30սմ/	զմ	10,00	8,09	0,801	1,37	0,059	0,15	աստիճաններ	զմ	1	5,75	5,75	80,94	5,81	6,58	
										շաղախ	մ <sup>3</sup>	0,0025	23	0,0575				
24	E27-251-1	Բիտումի տարածում /1մ <sup>2</sup> - 4.12կգ բիտումի ծախսով/ S=100.0մ <sup>2</sup>	տ	0,41	210,22				2,2	5,67	բիտում	տ	1,03	175,389	180,6507	86,61	180,65	204,54
